# Գ Լ Ո Բ Ո Ւ Ս

Վերլուծական տեղեկագիր

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Г Л О Б У С

Аналитический бюллетень

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

№ 38

Դեկտեմբեր, 2008թ.


# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Սպասողական վիճակ ԼՂՀ հիմնախնդրի շուրջ ........ 4

Լարվածության նոր օջախներ Ադրբեջանում ........ 9

Ռազմական բալանսը Հայաստանի և Ադրբեջանի միջև ........ 14

Между коррупцией и милитаризацией: новый доклад международной кризисной группы о реформе оборонного сектора в Азербайджане ........ 22

Ռազմաքաղաքական նորություններ (2008թ. հոկտեմբերի 17-նոյեմբերի 19) ........ 28

Էթնոդավանական փոքրամասնություններին և կրոնական խնդիրներին վերաբերող նորություններ (2008թ. հոկտեմբերի 15 – նոյեմբերի 15) ........ 31

# ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԼՂՀ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ԼՂՀ հիմնախնդրի շուրջ ի հայտ եկած վերջին ակտիվացումը զգալի մասով կապված է վրաստանյան զարգացումների հետ: Չնայած վրաց-ռուսական պատերազմը հանգեցրեց Հարավային Կովկասում Մոսկվայի ռազմաքաղաքական ազդեցության ընդհանուր մեծացմանը, սակայն Սահակաշվիլու վարչակազմի իշխանության պահպանումը փոխում է Ադրբեջանի նշանակությունը Ռուսաստանի համար: Նաև այդ հանգամանքով է պայմանավորված Մոսկվայի նախաձեռնությունը վերահսկողություն հաստատել ԼՂՀ հիմնախնդրի նկատմամբ:

Թբիլիսիին ավելի քան $4.5 մլրդ հատկացնելու Արևմուտքի որոշումը, անշուշտ, չի նշանակում, թե Սահակաշվիլու վարչակազմը երաշխիքներ ստացավ, որ զալիք ձմռանից հետո իրեն կհաջողվի մնալ իշխանության գլուխ: Բայց դա նշանակում է, որ Արևմուտքում ցանկանում են երաշխիքներ ունենալ, որ վրացական ներքաղաքական զարգացումների ցանկացած տարբերակի դեպքում այդ երկրի արտաքին ռազմավարությունը չի կրի էական փոփոխություններ: Մյուս կողմից՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչումից հետո ավելի հիմնավորված է թվում այն տարբերակը, որ առնվազն կարճատև հեռանկարում Մոսկվան սպառել է Թբիլիսիի վրա ներազդելու իր գլխավոր լծակը[1]:

Այս պայմաններում միակ այլընտրանքը Մոսկվայի համար Ադրբեջանի նկատմամբ այնպիսի վերահսկողության սահմանումն է, որն ի վիճակի կլինի խոչընդոտել արևմտյան աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական էքսպանսիայի չդադարող փորձերը Հարավային Կովկաս-Կասպից-Կենտրոնական Ասիա գծով:

Ընդհանուր հետևությունն այս է. քանի դեռ Ռուսաստանի համար «փակ» է վրացական ուղղությունը, Ադրբեջանի գեոստրատեգիական արժեքը Կրեմլում բարձր է գնահատվելու: Հետևաբար, Հարավային Կովկասում գործող միջազգային ուժի կենտրոնների հիմնական ջանքերը Վրաստանից կարող են տեղափոխվել Ադրբեջան:

Մեզ համար նախևառաջ կարևոր է այն, որ առաջիկա ժամանակահատվածում նշված տրամաբանությունը գերիշխող է լինելու տարածաշրջանային քաղաքականության մեջ: Ուժի կենտրոնների համար մենք չենք կարող ո՛չ փոխարինել Ադրբեջանին և ո՛չ էլ կարող ենք անտեսել այդ հանգամանքը: Ներկայում հենց այդ համատեքստում էլ հանդես է գալիս ԼՂՀ հիմնախնդիրը:

## *Իրավիճակի տրամաբանությունը*

Ադրբեջանի կարևորությունը նորություն չէ: Այդ երկրի աշխարհագրական դիրքը և էներգետիկ պաշարները նախորդ դարում էական նշանակություն են ունեցել հարավկովկասյան աշխարհաքաղաքականության համար և, իրադարձությունները ցույց են տալիս, որ իրավիճակը քիչ է փոխվել մեր օրերում:

Տարօրինակ չէ, որ Ռուսաստանի նախագահի ընտրվելուց կարճ ժամանակ անց Դմիտրի Մեդվեդևն այցելեց Բաքու: Այդ իմաստով զուգահեռներն այն փաստի հետ, որ բոլշևիկյան Ռուսաստանը Հարավային Կովկասի խորհրդայնացումը սկսեց հենց Ադրբեջանից, ավելի շատ օրինաչափություն են, քան պատահականություն: Հետևաբար, մեզ համար անակնկալ չպետք է լիներ այն, որ 2008թ. աշնանը Մոսկվան ու Անկարան որոշեցին միասին հանդես գալ

[1] Այդ առումով, առավել իրատեսական է ներկայանում, օրինակ, ռուս-վրացական հարաբերությունների նորմալացումը, քան հետագա սրացումը, ինչին ձգտում են Եվրամիությունը և Միացյալ Նահանգները, և որը կարող է որոշակի առումով ընդունելի լինել Մոսկվայի ու Թբիլիսիի համար՝ Սահակաշվիլու հեռանալուց հետո:

տարածաշրջանին առնչվող դիվանագիտական համալիր նախաձեռնությամբ: Երկու կողմերի այդ քայլը նույնպես պետք է գնահատել որպես աշխարհաքաղաքական օրինաչափ կոնստրուկցիա, ինչպես 20-րդ դարի սկզբին էր, և քանի դեռ չի փոխվել տարածաշրջանային քաղաքականության տրամաբանությունը, այդ օրինաչափությունն իրեն ժամանակ առ ժամանակ զգալ կտա:

Ներկայացված զարգացումների համատեքստում պետք է նոր իմաստով գնահատել հունիսի սկզբին *«Газпром»*-ի ղեկավար Ալեքսեյ Միլերի առաջարկությունը Ալիև-կրտսերին, ըստ որի՝ ռուսական ընկերությունը պատրաստ է գնել արտահանման համար նախատեսված ադրբեջանական ողջ բնական գազը՝ միջազգային բարձր գներով[1]: Անշուշտ, առաջարկությունն ինքնին ռազմավարական էր և առաջին հերթին նշանակում է, որ Ռուսաստանը հայտ է ներկայացրել Ադրբեջանի արտաքին քաղաքականության նկատմամբ սեփական ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ (բանաձևը շատ պարզ է՝ ով վերահսկում է Բաքվի էներգետիկ հոսքերը, վերահսկում է նրա արտաքին քաղաքականությունը): Բայց գլխավոր հետևությունը պետք է լիներ ոչ թե այն, որ մենք պետք է նորություններ սպասեինք նաև Ադրբեջանի նավթային սեկտորին առնչվող ռուսական նախաձեռնություններում[2], այլ այն, որ Միլերի առաջարկությունից հետո կանխատեսելի էր Ղարաբաղյան հարցում ռուսական ակտիվության կտրուկ աճը: Այս դեպքում նույնպես բանաձևը հստակ է՝ Ադրբեջանում ռազմավարական գերակայության հասնելու համար վերահսկողությունը նրա էներգետիկ պաշարների նկատմամբ բավարար չէ, պետք է վերահսկողություն հաստատվի նաև ԼՂՀ հիմնախնդրի նկատմամբ:

Մյուս կողմից՝ պատահական չէ, որ ռուս-վրացական պատերազմից հետո Վաշինգտոնում որոշեցին փոխնախագահ Դիք Չեյնիի մակարդակով պատվիրակություն ուղարկել Ադրբեջան: Ճիշտ է, ԱՄՆ փոխնախագահին այցելեց նաև Վրաստան և Ուկրաինա, սակայն ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ նրա առաջին հանգրվանը Բաքուն էր (սեպտեմբերի 3): Իսկ մոտ մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 1-3-ը, Ադրբեջանի մայրաքաղաքում էր ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ջոն Նեգրոպոնտեն: Հիշեցնենք, որ 2005-2007թթ. ընթացքում Նեգրոպոնտեն զբաղեցրել է նորաստեղծ ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենի պաշտոնը[3], ում անուղղակի ենթակայության ներքո են գործում ամերիկյան գրեթե բոլոր հատուկ ծառայությունները, ԱՄՆ ներկայիս վարչակազմի առանցքային դեմքերից մեկն է:

Փաստն այն է, որ նշված այցերն ի ցույց են դնում ամերիկյան կողմի մտահոգությունները՝ կապված Բաքվի շուրջ ընթացող զարգացումների հետ: Օրինակ, օգոստոսին Բաքուն նավթի մի որոշակի չափաբաժին՝ 100 հազ. տոննա, միջազգային շուկա արտահանեց Իրանի միջոցով, իսկ սեպտեմբերին այդ թիվը հասավ 300 հազ. տոննայի[4]: Բնութագրական է, որ ընդամենը մեկ տարի առաջ անհեռանկարային թվացող այդ տարբերակները (ադրբեջանական նավթի արտահանումը Ռուսաստանի և Իրանի միջոցով[5]) ուղեկցվեցին պաշտոնական

---

[1] Ըստ արևմտյան աղբյուրների՝ Ադրբեջանի միայն «Շահ-Դենիզ» գազահանքը պարունակում է 1.2 տրլն մ³ բնական գազի պաշարներ, և 2011թ. հետո այն տարեկան կկարողանա արդյունահանել մոտ 17 մլրդ մ³ բնական գազ: Ըստ հունիսին տարածված տեղեկության՝ Միլերն ադրբեջանական հազար մ³ գազի դիմաց առաջարկել էր $360:

[2] Չնայած հետագա զարգացումներն ընթացան հենց այդ ուղղությամբ: Վրաց-ռուսական պատերազմի հետևանքով, երբ ժամանակավորապես փակվեցին Վրաստանի տարածքով անցնող «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» ու «Բաքու-Սուփսա» նավթամուղներն ու անհնար դարձավ ադրբեջանական նավթը միջազգային շուկա տեղափոխել նաև վրացական երկաթգծով, Բաքուն շատ արագ որոշում կայացրեց իր սև ոսկու մի մասը՝ օրական մոտ 100 հազ. բարել, տեղափոխել Ռուսաստանի միջոցով՝ «Բաքու-Նովոռոսիյսկ» նավթամուղով: Վրաց-ռուսական պատերազմից հետո էլ ռուսական ուղին շարունակում է գործել:

[3] Ջոն Նեգրոպոնտեն եղել է ԱՄՆ Ազգային հետախուզության առաջին տնօրենը:

[4] Իրանի միջոցով ադրբեջանական նավթն արտահանվում է, այսպես կոչված, փոխանակման *(swap)* միջոցով: Բաքուն իր արդյունահանած նավթն Իրանի կասպյան Նեկա նավահանգստում հանձնում է իրանական *«National Iranian Oil Terminals Co.»* ընկերությանը և նույն քանակությամբ նավթ ստանում Իրանի հարավային՝ Պարսից ծոցի նավահանգիստներում, որտեղից էլ արտահանում է միջազգային շուկա:

[5] Նախկինում այդ տարբերակներն իրական չէին համարվում, քանի որ ադրբեջանական նավթը բավականացնում է միայն «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» ու «Բաքու-Սուփսա» նավթամուղներով արտահանե-

Բաքվի ուշագրավ հայտարարություններով: Ս.թ. սեպտեմբերի 25-ին «The Financial Times» պարբերականի հրապարակած հարցազրույցում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարում է, թե Բաքվի արտաքին քաղաքական ռազմավարությունն է՝ լինել բոլորի լավ բարեկամը, համաձայն սեփական ազգային շահերի:

Ներկայացվածը ցույց է տալիս, որ Բաքվում, ըստ ամենայնի, ձեռնամուխ են եղել սեփական էներգակիրների արդյունահանման և արտահանման ռազմավարությունում փոփոխություններ մտցնելուն: Հնարավոր է, որ դա այդպես չէ, սակայն Չեյնիի ու Նեգրոպոնտեի այցերը վկայում են, որ Վաշինգտոնում հենց այդպես էլ հասկացել էին: Քիչ հավանական է, որ այդ պահին գոյություն ունենար որևիցե այլ հարց, որն ամերիկյան վարչակազմի նման բարձրաստիճան ներկայացուցիչներին կբերեր Բաքու:

Թեև ս.թ. նոյեմբերի 2-ի Մայենդորֆի հռչակագիրն ավելի շատ խոսում է այս փուլում ռուսական դիվանագիտության անհաջողության մասին[1], սակայն մի բան հստակ է՝ հռչակագիրը նաև չի փակում սկիզբ առած գործընթացը: Նշվածը մի կողմից հիմք է տալիս ենթադրելու, որ մինչև ամերիկյան նոր վարչակազմի գործունեությունը դժվար թե Մոսկվան հանդես գա նոր՝ լուրջ նախաձեռնությամբ, բայց մյուս կողմից՝ ստեղծված դադարը նույնպես սահմանափակվելու է առաջիկա երկու-երեք ամիսներով:

## *Գնահատական և հեռանկար*

Հենվելով այդ թվում Մայենդորֆի հռչակագրի վրա՝ ավելի իրատեսական է ներկայանում այն գնահատականը, որ ԼՂՀ-ի շուրջ առկա *status quo-ն* փոխելու առումով Մոսկվայի հնարավորությունների պատուհանը փակվում է՝ այդ ուղղությամբ առանց որևէ լուրջ արդյունքի:

Սակայն փաստն այն է, որ ռուսական նախաձեռնությունն իր ազդեցությունն է ունեցել տարածաշրջանի բոլոր երկրների և տարածաշրջանում գործող ուժի կենտրոնների քաղաքականությունների և անվտանգության ապահովման ոլորտում առկա ձևակերպումների վրա: Կարևոր է նաև գիտակցել, որ սկիզբ առած գործընթացը դեռ ավարտուն տեսք չի ստացել: Հավանական է, որ նոր իրավիճակի վերաբերյալ մենք ավելի հստակ պատկերացումներ կունենանք գալիք տարի[2]:

Ներկայացվածը նշանակում է, որ որոշ չափով փոխվում է ԼՂՀ հակամարտության շուրջ առկա աշխարհաքաղաքական կոնստրուկցիաների և ընդհանրապես փոխդասավորվածության պատկերը, որն ընդհանուր գծերով պահպանվում էր 1994թ. ի վեր:

Այս պահին գլխավոր հետևությունն առնչվում է Ադրբեջանին: Ավելի հավանական է ներկայանում այն տարբերակը, որ եթե Վաշինգտոնում, Լոնդոնում, Բրյուսելում կամ նույնիսկ Թեհրանում որոշեն ընդդիմանալ ռուսական նախաձեռնությանը, ապա դրա առաջին նշանները մենք կտեսնենք Բաքվում: ԱՄՆ-Մեծ Բրիտանիա զույգի համար Մոսկվայի կողմից «ճեղքման» գրանցումը կամ առավել ևս՝ վերահսկողության սահմանումը ԼՂՀ խնդրի նկատմամբ կնշանակի եթե ոչ Ադրբեջանի հիմնական էներգետիկ հոսքերի նկատմամբ ազդեցության կորուստ, ապա գոնե Ադրբեջանի էներգետիկ ոլորտում ներկայության կրճատում: Այդ հանգամանքն, ի վերջո, կարող է ազդեցություն ունենալ Բաքվի արտաքին քաղաքականության վրա:

Հեռանկարի իմաստով կարևոր նշանակություն ունեն երկու հարց.

---

լուն, և պատճառներից մեկն էլ դա էր, որ 2007թ. սկզբից Բաքուն հրաժարվեց իր նավթն արտահանել «Բաքու-Նովոռոսիյսկ» նավթամուղով:

[1] Ընդ որում՝ ավելի հավանական է, որ ռուսական նախաձեռնությանը բացասաբար են մոտեցել թե՛ Երևանում, թե՛ Բաքվում: Միաժամանակ, հատկապես Բաքվի համար կարևոր է հասկանալ, թե որն է լինելու Բարաք Օբամայի վարչակազմի կովկասյան քաղաքականությունը:

[2] Այդ իմաստով ուշագրավ էր ս.թ. նոյեմբերի 15-ին ԱՄՆ Արտաքին հարաբերությունների խորհրդում *(Council on Foreign Relations)* Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի հայտարարությունը, թե ներկայում Ռուսաստանը չի անդամակցում որևէ ռազմաքաղաքական դաշինքի, իսկ ՀԱՊԿ-ն Մոսկվայում դիտարկում են ավելի շատ քաղաքական, քան ռազմական կառույց:

- ի՞նչ որոշման են հանգելու Բաքվում 2009թ. հունվարից հետո, երբ հասկանալի կդառնա ամերիկյան նոր վարչակազմի քաղաքականությունը տարածաշրջանում[1],
- ի՞նչ զարգացում կունենան հայ-թուրքական հարաբերությունները, եթե նկատի ունենանք, որ տեղի ունեցած զարգացումներից հետո առաջիկայում թուրքական կողմին ավելի դժվար կլինի վարել հայ-թուրքական սահմանի փակ մնալուն միտված քաղաքականություն[2]:

## *Առաջարկություններ*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջիկայում ևս ԼՂՀ հարցը շարունակելու է հանդիսանալ Հայաստանի նկատմամբ արտաքին ճնշման առաջնային ուղղություններից մեկը, իսկ մյուս կողմից՝ նկատի ունենալով հարցի վերջին ակտիվացման շրջանում իշխանության մաս չկազմող հայրենի հասարակական-քաղաքական շրջանակների արձագանքի մասշտաբը և որակը, էական է, որպեսզի Հայաստանում լինի քաղաքական ուժ, որ կոշտ դիրքորոշում ունենալով ԼՂՀ հարցի վերաբերյալ՝

- չլինի մարգինալ քաղաքական դաշտում,
- միևնույն ժամանակ, լինի ընդդիմադիր կառույց՝ առավելագույն հաջողություններ ունենալով միայն ՏԻՄ ընտրություններում:

Պետք է ասել, որ նման լուծումները հատկապես տարածված են եվրոպական երկրների քաղաքական համակարգերում՝ Ֆրանսիա (Լը Պեն), Ավստրիա (Հայդերի հիմնած քաղաքական ուժը) և այլն:

Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ կորցնել Ռուսաստանը: Մեր երկրում տեղակայված ռուսական զորքերը, հանրապետության անվտանգության ապահովման գործում իրենց դերակատարությունն ունենալուց բացի, աշխարհաքաղաքական նշանակության հնարավորություն են ստեղծում մեզ համար՝ որպես գործոն կիրառելու ԱՄՆ, ԵՄ, Թուրքիայի և նույն՝ Ռուսաստանի հետ հարաբերություններում: Իհարկե, Երևանը չի կարող իր ներգործությունն ունենալ Հարավային Կովկասի ուղղությամբ Մոսկվայում կայացվող ռազմավարական որոշումների վրա, բայց Ռուսաստանի հետ հարաբերություններում ակնառու կերպով բաց է մնացել հասարակական-քաղաքական հարթությամբ տարվող լոբբիստական աշխատանքի հարցը: Այստեղ հարկավոր է հիշեցնել, որ տասնամյակներ շարունակ հայկական կողմը (Սփյուռքը) կարողացավ ինչ-որ գործոնի դեր ստանձնել Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում միայն այդ աշխատանքի շնորհիվ:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպես կավարտվեն ներկայում ընթացող հայ-թուրքական պայմանավորվածությունները, Անկարայի հետ հարաբերություններում Ցեղասպանության հարցի արծարծումը Երևանի համար միշտ էլ հանդես է գալու որպես ճնշման և անվտանգության ապահովումն ուժեղացնող հնարավորություն: Ի դեպ, այս տրամաբանությունը կարող է էական փոփոխությունների չենթարկվել անգամ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումից հետո:

Մյուս կողմից՝ կարճատև հեռանկարում Ցեղասպանության հարցում Երևանը կարող է ուժեղացնել ճնշումը Անկարայի նկատմամբ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հատկապես Հարավային Կովկասին առնչվող ռուս-թուրքական վերջին նախաձեռնությունից հետո Վաշինգտոնը պետք է որ մեծացնի ճնշումը Անկարայի ուղղությամբ՝ հասնելու հայ-

---

[1] Իսկ որ Բաքվում դժվար թե կարողանան վարել նախկին արտաքին քաղաքականությունը, վկայում են նաև նոյեմբերի 10-13-ը Ադրբեջանի հյուսիսային՝ Դաղստանին սահմանակից Քուսարի և Ղուբայի շրջաններում տեղի ունեցած ռազմական գործողությունները՝ Ադրբեջանի զինված ուժերի և վահաբական մի խմբավորման միջև: Խմբավորմանը հաջողվել էր մի քանի օր դիմադրություն ցույց տալ ծանր զինտեխնիկայով զինված ադրբեջանական ներքին զորքերին:

[2] Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այդ թվում Մոսկվայի միջնորդությամբ վերջին շրջանում ակտիվացած Երևան-Անկարա բանակցությունները նաև ԱՄՆ-ի համար այդ ուղղությամբ «ճեղքում» գրանցելու հիմք են ստեղծել:

թուրքական սահմանի վերաբացմանը: Ըստ ամենայնի, վերջին հանգամանքը գիտակցում են նաև Թուրքիայում:

Հայաստանի համար աստիճանաբար կարևոր է դառնում հարավային ուղղությունը: Հատկապես Իրան-Հայաստան երկաթուղու կառուցումից հետո մեր տնտեսության համար կարող է նոր՝ ռազմավարական ուղղություն դառնալ Պարսից ծոցի բավական արագ զարգացող երկրների շուկան: Հայտնի է, որ հունվարի 1-ին *Gulf Cooperation Council*-ի վեց անդամ երկրները (Սաուդյան Արաբիա, Օման, Արաբական Միացյալ Էմիրություններ, Կատար, Բահրեյն, Քուվեյթ) հայտարարեցին միասնական շուկայի ձևավորման մասին: Ներկայում Իրանի և նշված վեց երկրների ընդհանուր ՀՆԱ-ն գրեթե հավասար է Ռուսաստանի ՀՆԱ-ին[1]: Հայաստանի տնտեսական համագործակցության զարգացումն այդ ուղղությամբ ի վիճակի է նվազեցնելու մեր ազգային անվտանգության առջև ծառացած մարտահրավերներից բխող վտանգը:

*Սարգիս Հարությունյան*
*«Նորավանք» հիմնադրամ*

[1] Արժույթի միջազգային հիմնադրամի *(IMF)* տվյալների համաձայն՝ 2008թ. Պարսից ծոցի այդ յոթ երկրների ընդհանուր ՀՆԱ-ն կազմել է $1.533 տրլն, իսկ Ռուսաստանինը՝ $1.778 տրլն:

# ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՋԱԽՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

*Վերջին շրջանում Ադրբեջանում ի հայտ են եկել լարվածության նոր օջախներ, որոնք, մի դեպքում, կապվում են Ադրբեջանի հյուսիսում իսլամական գործոնի ակտիվացման, մյուս դեպքում՝ էթնոքաղաքական զարգացումների, մասնավորապես՝ լեզգիական գործոնի հետ: Հատկանշական է, որ լինելով առանձին խնդիրներ՝ դրանք ունեն զգալի ընդհանրություններ: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ Ադրբեջանի իշխանությունները սուննի կրոնաքաղաքական արմատական առանձին կառույցների գործունեությունը կապում են լեզգի «անջատողականների» գործողությունների հետ[1]:*

## *Հարձակում հյուսիսային Ադրբեջանի վրա*

Ս.թ. նոյեմբերի 10-ին և հաջորդ օրերին Ադրբեջանի հյուսիսային՝ Դաղստանին սահմանակից Քուսարի և Ղուբայի շրջաններում տեղի ունեցան ռազմական գործողություններ Ադրբեջանի զինված ուժերի և սուննի կրոնաքաղաքական (սալաֆիական) ռազմական մի խմբավորման միջև, որը հայտնի է «Անտառային եղբայրներ» անունով: Չնայած ուժային նախարարությունը հերքել է տեղեկատվությունը[2], սակայն ադրբեջանական աղբյուրները, ընդհանուր առմամբ, հաստատել են այն: Հատկանշական է, որ Քուսարի բնակչության 90-95 տոկոսը լեզգիներ են, իսկ Ղուբայում լեզգիները կազմում են բնակչության մոտ 15 տոկոսը:

***Տեղեկանք.*** «Անտառային եղբայրներ» խմբավորումն ունի հյուսիսկովկասյան ծագում, կազմում ներգրավված են չեչեններ, արաբ աֆղանցիներ, դաղստանցիներ և ադրբեջանցիներ: Գործում է հիմնականում Դաղստանի հարավային շրջաններում, նաև՝ Ադրբեջանի հյուսիսում: Խմբավորման անդամները կապ ունեն չեչենական պատերազմի և դաղստանյան մոջահիդների հետ: Նրանց մի մասը մարտնչել է վահաբական դաշտային հրամանատար Ռաբանի Խալիլովի[3] հետ: Վերջինս, ով հայտնի է եղել որպես Կովկասի դիմադրության ուժերի դաղստանյան ճակատի էմիր, 1999-ից Դաղստանում, Խատաբի հրամանատարությամբ կռվել է ռուսական բանակի դեմ[4]:

«Անտառային եղբայրները» կազմված է *ջամաաներից*՝ փոքր խմբավորումներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ղեկավարը (կամ էմիրը): Խմբավորումը մարտնչող ռազմական կառույց է, որ որդեգրել է *ռազմական ջիհադի* հայեցակարգը: Գաղափարախոսության հիմքում ընկած է Ադրբեջանում շարիաթական պետության ստեղծման գաղափարը[5]: Կառույցը զբաղվել է արաբական երկրներից արմատական կրոնական գրականության տարածմամբ:

«Անտառային եղբայրների» մարտավարությունը և մեթոդաբանությունը ներառված են չեչենական և դաղստանյան վահաբականությունից, որն իր հերթին կրում է աֆղանական ջիհադական շարժման և մոջահիդների ազդեցությունը: Այդ ինստիտուտը (որն աֆղանական պատե-

---

[1] Տե՛ս Terrorist Focus, Volume 5, Issue 32, September 10, 2008.

[2] Նոյեմբերի 11-ին տեղեկությունը հերքել էր Ադրբեջանի ՆԳՆ մամուլի ծառայությունը՝ Ադրբեջանի հյուսիսային շրջանում ներքին զորքերի տեղաշարժը կապելով հերթական զորավարժությունների հետ: Նոյեմբերի 10-ին ադրբեջանական *APA* գործակալությունն արդեն հայտնել էր, որ նոյեմբերի 9-ից ադրբեջանական ներքին զորքերը զինամթերքի որոնման նպատակով շարժվում են դեպի Քուսարի և Ղուբայի լեռնային ու անտառային շրջաններ:

[3] Ռաբանի Խալիլովը, ով Դաղստանի տարածքում իրականացրել է բազմաթիվ ահաբեկչություններ, դաղստանյան հատուկ ուժերի կողմից սպանվել է 2007-ին:

[4] Մանրամասն տե՛ս http://www.kavkaz-uzel.ru/persontext/person/id/1197462.html

[5] Տե՛ս http://www.jamestown.org/terrorism/news/article.php?articleid=2374402

բազմի ժամանակ ներդրվել է ամերիկյան և սաուդական հատուկ ծառայությունների կողմից) հետագայում դրսևորումներ ունեցավ Արցախյան, Չեչնիայի, Բոսնիայի պատերազմներում:

Հատկանշական է, որ կառույցի անդամները պարբերաբար անարգել կարողացել են ներթափանցել Ադրբեջան և իրականացնել տարաբնույթ գործողություններ: Խմբավորման հանգուցային դեմքերից էին ծագումով լեզգի և իրեն Դաղստանի վահաբականների առաջնորդ համարող «Դաղստանի էմիր» Իլղար Մոլլաչիևը (Աբդուլմաջիդ մականունով) Զագաթալայից, նաև նրա բարեկամ Սամիր Մեհտիևը (Սուլեյման մականունով)[1]:

2008թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեջանի ոստիկանության և ներքին զորքերի «Շահին» հատուկ նշանակության ջոկատը ռազմական գործողություններ է իրականացրել Քուսարի շրջանի Հեզրե գյուղի մոտակայքում թաքնվող և զինված «եղբայրների» դեմ, որոնց հաջողվել է նահանջել: Արդյունքում՝ սպանվել է ադրբեջանցի մի զինվորական:

2008թ. սեպտեմբերին Ադրբեջանի իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին, որ Բաքվում օգոստոսի 17-ին Աբու Բաքր սուննիական մզկիթում իրականացված ահաբեկչությունը կազմակերպել են «Անտառային եղբայրները», ավելի ստույգ՝ Իլղար Մոլլաչիևի խումբը[2]: Ադրբեջանի իշխանությունները «Անտառային եղբայրների» գործունեությունը կապեցին լեզգի «անջատողականների» հետ:

## *Լեզգիական գործոնն Ադրբեջանում*

*Ադրբեջանի տարածքն առանձնանում է էթնոդավանական բարդ խճանկարով: Այստեղ ապրում են լեզգիներ, թալիշներ, ավարներ, ծախուրներ, լեռնային հրեաներ, ռուսներ, քրդեր, ուդիներ, ինգիլոյցիներ, թաթեր և այլն: ԽՍՀՄ փլուզումից հետո էթնոդավանական փոքրամասնությունների շրջանում ազգային ինքնագիտակցությունը մեծ վերելք ապրեց, ի հայտ եկան էթնոքաղաքական շարժումներ: Ադրբեջանի ներքաղաքական գործընթացներում որոշակի նշանակություն սկսեց ձեռք բերել լեզգիական գործոնը:*

***Տեղեկանք.*** Լեզգիները բնակվում են Դաղստանում և Ադրբեջանի հյուսիսային շրջաններում, ունեն կովկասյան ծագում, դավանում են իսլամի սուննի ուղղությունը (կան նաև փոքրաթիվ շիաներ, ինչպես նաև սուֆիներ): Լեզգիները համարվում են Ադրբեջանի էթնոդավանական ամենամեծ խումբը, լեզուն պատկանում է հյուսիսարևելյան կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական ճյուղին: Նրանց թվաքանակի վերաբերյալ հակասական տեսակետներ կան: Ըստ ՄԱԿ մարդու իրավունքների բարձրագույն հանձնաժողովի *(UNHCHR)* 2006թ. զեկույցի *(Minorities in the North Caucasus)*՝ Ադրբեջանի Քուսարի և Խաչմազի շրջաններում լեզգիները կազմում են բնակչության 75 տոկոսը, իսկ Բաքու քաղաքում և նրա արվարձաններում՝ 15: Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ լեզգիները երկրի բնակչության 2-2,5 տոկոսն են: 1999թ. մարդահամարի տվյալներով՝ նրանց թիվը 178.000 էր: Լեզգիական աղբյուրներով՝ Ադրբեջանում բնակվում է 500.000-700.000 լեզգի բնակչություն: Ադրբեջանցի ուսումնասիրող Արիֆ Յունուսովի համոզմամբ՝ Ադրբեջանի լեզգիների թիվը 250.000-260.000-ի շրջանակներում է:

Լեզգիները, որոնք պատմական Աղվանքի հնագույն ժողովուրդներից են, մինչև 1918թ. բնակվում էին Ռուսաստանի կազմում գտնվող Դաղստանի շրջանում, Բաքվի և Ելիզավետպոլի

---

[1] 2007թ. Ադրբեջանի իշխանությունները Սումգայիթում ձերբակալեցին «Անտառային եղբայրների» 17 ակտիվիստների, այդ թվում՝ խմբավորման առաջնորդներից մեկին՝ ծագումով արաբ Նաիֆ Աբդուլ Քերիմ Ալ-Բադավիին (Աբու Ջաֆար մականունով): 2008թ. հուլիսի 19-ին Իլղար Մոլլաչիևը և Սամիր Մեհտիևը եղել են Բաքվում և Սումգայիթում: Նրանք ծրագրել էին ստեղծել «Սումգայիթ ջամաան» (որը պետք է Բաքվում կողոպուտների արդյունքում ձեռք բերեր զինամթերք և իրականացներ ռազմական գործողություններ): Պետք է ստեղծվեր նաև «Ղուբա-Քուսար ջամաան», որը Ադրբեջանի հյուսիսի լեռնային շրջաններում ստեղծելու էր ռազմական հենակետեր և զինանոցներ: Նրանց էական օգնություն են ցույց տվել նաև տեղացի առանձին ադրբեջանցիներ:

[2] Սեպտեմբերի 7-ին Դաղստանում ներքին զորքերի հատուկ ստորաբաժանումներին հաջողվեց վերացնել Մոլլաչիևին:

նահանգներում: 1918թ. լեզգիները բաժանվեցին երկու հատվածի: Նրանց մի մասը հայտնվեց ներկայիս Դաղստանի (որտեղ ներկայում լեզգիների թիվը 205.000-500.000-ի շրջակայքում է), մյուս հատվածը՝ 1918թ. մայիսին հռչակված Ադրբեջանական Հանրապետության կազմում:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո լեզգիների ստատուս քվոն պահպանվեց, ինչը մեծ հարված հասցրեց նրանց ազգային նկարագրին: Լեզգիների ազգային իրավունքներն էապես սահմանափակվեցին, մեծապես տուժեցին լեզգիական ազգային կրթական համակարգն ու մշակույթը (այս միտումը շարունակվեց 1991թ. Ադրբեջանի անկախացումից հետո էլ): Լեզգիների կողմից թյուրքացման (կամ ձուլման) քաղաքականությանը հակադարձելու փորձ կատարվեց դեռևս 1960-ականներին, երբ լեզգիական տարածքներում ձևավորվեցին ընդհատակյա ազգայնական կազմակերպություններ:

Լեզգի քաղաքական գործիչ Նարիման Ռամազանովի կարծիքով՝ ի տարբերություն ազգային այլ փոքրամասնությունների, ինչպես, օրինակ, թաթերի կամ քրդերի, որոնց շրջանում ազգային ինքնագիտակցությունը որոշակիորեն նահանջ ապրեց, լեզգիները կարողացան պահպանել իրենց ազգային լեզուն և ինքնությունը Դաղստանում ունեցած էթնիկ կապերի շնորհիվ:

1990թ. Դաղստանում տեղի ունեցավ լեզգիական դեմոկրատական «Սադվալ» («Միասնություն») կազմակերպության հիմնադիր համագումարը: Շարժման նպատակը (որին աջակցում էր Ռուսաստանը) լեզգիների միավորման գործընթացն առաջնորդելն էր: 1991թ. Դաղստանում հրավիրված համալեզգիական կոնգրեսը հռչակեց Լեզգիստանի հանրապետության ստեղծումը Ադրբեջանի հյուսիսի եւ Դաղստանի հարավի լեզգիաբնակ տարածքներում, Ռուսաստանի Դաշնության կազմում: 1992թ. լեզգիները քաղաքական մի շարք ակցիաներ իրականացրին, որոնցից էին Բաքու–Ռոստով մայրուղու շրջափակումը, Մոսկվայում լեզգիական ցույցի կազմակերպումը: Բաքուն զգուշացրեց, որ լեզգիական շարժման հետագա ընդլայնման դեպքում տարածքային հավակնություններ կդրսևորի Հարավային Դաղստանի, ներառյալ Դերբենտի նկատմամբ[1]: 1995թ. «Սադվալը» հայտարարեց, որ հետամուտ է անկախ պետության ստեղծմանը:

1996թ. արդեն Հեյդար Ալիևի օրոք ադրբեջանական հատուկ ծառայությունները լեզգի ակտիվիստների նկատմամբ սկսեցին հետապնդումներ իրականացնել, շատերը հայտնվեցին բանտերում: Միևնույն ժամանակ, քայլեր կատարվեցին լեզգիական շարժմանը չափավոր բնույթ հաղորդելու ուղղությամբ: Արդեն 1997-ից «Սադվալը» բաժանվեց երկու թևի՝ արմատական, որ անկախության կողմնակից էր, և չափավոր, որ հանդես էր գալիս Ռուսաստանի և Ադրբեջանի կազմում լեզգիական ինքնավարությունների ստեղծման պահանջով[2]:

Ադրբեջանական իշխանություններին ժամանակի ընթացքում հաջողվեց որոշակի չափով վարկաբեկել «Սադվալը», որն, ի վերջո, կորցրեց նախկին նշանակությունը: Այն «անջատողական» շարժում դիտվեց, որը պատասխանատու է մի շարք ահաբեկչությունների, այդ թվում՝ 1994թ. Բաքվի մետրոյում իրականացված պայթյունի համար: Կառույցը մեղադրվում է նաև սուննի կրոնաքաղաքական արմատական շարժումների հետ կապ ունենալու մեջ: Ադրբեջանական իշխանությունները ձգտում են լեզգիական շարժումը տանել այլ հունով, որի ապացույցն իրենց իսկ ստեղծած լեզգիական «Սամուր» կազմակերպությունն է, որի քաղաքական օրակարգում բացակայում են անկախության և ինքնավարության պահանջները:

Ժամանակի ընթացքում լեզգիական ազգային գործընթացում որոշակի նշանակություն սկսեց ձեռք բերել նոր բաղադրիչ՝ իսլամը: Դեռևս 1990-ականներից սաուդական միսիոներների միջոցով շրջան ներթափանցեց սուննի իսլամը իր սաուդական՝ սալաֆիական մեկնաբանությամբ[3]: Չեչենական պատերազմներին և դաղստանյան հակառուսական ռազմական գործողություններին զուգահեռ՝ լեզգիական շրջաններում մեծ տարածում ստացան իսլամական կրոնաքաղաքական գաղափարները (այդ թվում՝ արմատական, ինչը նկատի է առնում

---

[1] *Հակոբյան Ա.*, Լեզգիական գործոն, «Հանրապետական», թիվ 7 (27), 2005թ.:

[2] *Liz Fuller,* Does Azerbaijan Face A New Irredentist Threat?, http://www.globalsecurity.org/military/library/news/2008/05/mil-080515-rferl01.htm

[3] *Igor Rotar,* Islamic Fundamentalism in Azerbaijan: myth or reality, The Jamestown, Volume 6, Issue 8 /August 31, 2000.

շարիաթական պետության ստեղծումը, ռազմական ջիհադը որպես մեթոդաբանություն կիրառելը և այլն): Լեզգի մի շարք երիտասարդներ անդամագրվեցին տարաբնույթ իսլամական ջամաաներում, որոնք գործում էին Դաղստանում և Չեչնիայում: Հատկանշական է, որ լեզգիական ազգային տարածքներում բնակչության մի զգալի հատվածը դարձավ սուննի կրոնական գործառույթի հետևորդ:

Ադրբեջանի իշխանությունները մինչ օրս լեզգիական խնդրի լուծումը տեսնում են ճնշումների և ուժային այլ մեթոդների մեջ: Ասվածի ապացույցն է այն, որ լեզգիական շրջաններում ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում կրոնական գործիչների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրագրողների, մտավորականների ձերբակալություններ: Լեզգի հասարակական-քաղաքական գործիչներն ադրբեջանական իշխանություններին, որպես կանոն, մեղադրում են մայրենի լեզուն սովորելու հետ կապված անհաղթահարելի դժվարությունների[1] և վերջապես՝ լեզգիական շրջաններում սոցիալական տարաբնույթ խնդիրների (այդ թվում՝ գործազրկության) առկայության մեջ[2]:

Այս առումով հետաքրքրական է 2008թ. հունիսին Ադրբեջանում ապրող լեզգիների, ավարների և ծախուրների[3] միացյալ փաստաթուղթը, որն ունի «Ադրբեջանական պետական ֆաշիզմի դեմ» խորագիրը: Դրանում Ադրբեջանի լեզգիների, ավարների և ծախուրների միացյալ թիվը ներկայացված է մեկ միլիոն:

Հայտարարության մեջ ազգային փոքրամասնությունները միջազգային հանրությանը զգուշացնում են էթնիկ զտման և բռնի տեղահանման վտանգի մասին, ինչը հետևանքն է Ադրբեջանին բռնակցվելուն: Որպես ապացույց բերվում է Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի ժամանակ տասնյակ հազարավոր լեզգի, ավար և ծախուր երիտասարդների (որոնք ավելի մեծ թիվ են կազմել, քան ադրբեջանցիները) բռնի ռազմաճակատ ուղարկվելու փաստը:

## *Դիտարկում*

- Այնքան էլ հիմնավոր չի թվում այն տեսակետը, թե անկախ Լեզգիստանի ստեղծման և Ադրբեջանում անջատողական պատերազմի մասին մտավախությունն անհիմն է, քանի որ լեզգիական ազգայնական շարժումն այլևս չունի լայն աջակցություն լեզգի բնակչության շրջանում, որը քաղաքականապես կազմակերպված չէ[4]: Ամեն պարագայում, լեզգիական քաղաքական օրակարգը, որի կարևորագույն բաղկացուցիչներն են քաղաքական երկու ձևաչափերի (անկախության և ինքնավարության) պահանջները, չի կորցրել իր նշանակությունը: Լեզգիական խնդիրն իրապես համարվում է Հյուսիսային Կովկասի ամենասուր և անկանխատեսելի խնդիրներից մեկը: Միևնույն ժամանակ, լեզգիական հասարակական և քաղաքական շրջանակները զիտակցում են խնդրին առնչվող ռիսկերը՝ որպես օրինակ ունենալով տարածաշրջանի էթնոքաղաքական հակամարտությունները:
- Էթնոքաղաքական շարժումների և իսլամական գործոնի ակտիվացումը տանում է Ադրբեջանի թուլացմանը[5]: Այդ պատճառով իսլամական և էթնիկ գործոնի շահարկումն

---

[1] Լեզգիական շրջաններում դասավանդվող հիմնական լեզուներն են ադրբեջաներենը կամ ռուսերենը: Նախակրթարաններում լեզգիերենը դասավանդվում է որպես օտար լեզու, շաբաթը երկու անգամ: Դասագրքերը բերվում են Ռուսաստանից, ինչը համարվում է ոչ այնքան նպատակահարմար ադրբեջանական իրողությանը:

[2] Նշենք, որ դժգոհության պատճառներից մեկը կապված է իշխանությունների կողմից շրջանը թուրք մսխեթցիներով և հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով առաջ եկած ադրբեջանցի փախստականներով բնակեցնելու փաստի հետ:

[3] Ավարները և ծախուրները կովկասյան ծագում ունեցող ժողովուրդներ են:

[4] Օրինակ, *University of Maryland Center for International Development and Conflict Management. Minorities at Risk: Assessment for Lezgins in Azerbaijan, Online Report, 2004*

[5] Ադրբեջանական փորձագիտական հանրությունը գիտակցում է, որ երկրում առկա էթնիկ խնդիրները մեծ վտանգ են պարունակում: Այդ իսկ պատճառով ազգային տարածքներում առաջարկվում է իրականացնել սոցիալ-տնտեսական բարեփոխումներ:

Ադրբեջանում կարող է հետաքրքրել տարածաշրջանի աշխարհաքաղաքական բոլոր խաղացողներին՝ Ռուսաստանին, Իրանին, Թուրքիային, ԱՄՆ-ին:

- Համարվում է, որ Ռուսաստանը լեզգիական գործոնն օգտագործում է իր կովկասյան քաղաքականության մեջ: Չի բացառվում, որ Ռուսաստանը վերահսկողություն ունենա լեզգիական, ինչպես նաև իսլամական կրոնաքաղաքական ռազմական առանձին խմբավորումների և շարժումների (այդ թվում՝ «Անտառային եղբայրների») նկատմամբ, որի օգնությամբ կարող է ազդեցության լծակներ ձեռք բերել Ադրբեջանի և այդ ճանապարհով՝ տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների վրա:
- Միևնույն ժամանակ, Ադրբեջանում իսլամական գործոնի ակտիվացումը կարելի է դիտարկել նաև որպես կրոնաքաղաքական ծայրահեղական կառույցների միջոցով շրջանն ապակայունացնելու և այնտեղ լայն ազդեցություն ունեցող Ռուսաստանի դիրքերը թուլացնելու ձգտում, որին հետամուտ է Արևմուտքը:
- Հաշվի առնելով Ադրբեջանում ժամանակ առ ժամանակ էթնոքաղաքական և հասարակական զարգացումներում իսլամական գործոնի ակտիվացումը՝ որպես հնարավոր սցենար չպետք է բացառել, որ ապագայում Ադրբեջանը կարող է դառնալ «չափավոր իսլամական» տիպի պետություն (Թուրքիայի օրինակով), որը հետագայում կարող է ծառայել իսլամը դեպի Ռուսաստանի հյուսիսկովկասյան սուբյեկտներ «արտահանելու» հենակետ:

*Արաքս Փաշայան*
*«Նորավանք» ԳԿՀ*

# ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՋԵՎ

Հոդվածում ներկայացված ռազմական վիճակագրական տվյալները հիմնվում են հիմնականում հեղինակավոր բրիտանական *«The International Institute for Strategic Studies»*-ի հրապարակած *«The Military balance»* տարեկան հաշվետվությունների և ռուսաստանյան *«Центр анализа стратегий и технологий»*-ի վերլուծական նյութերի, մասնավորաբար՝ *«Moscow defense brief»* ամսագրի տեղեկատվության վրա: Վերը նշված կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը մասամբ համադրվել է նաև ԶԼՄ-ում տեղ գտած ռազմական, ռազմատեխնիկական բնույթի տվյալների ու վերլուծականների հետ: Ներկայացվում են Հայաստանի (ԼՂՀ) ու Ադրբեջանի միջև ռազմական զուգակշռի վերջին տարիների վիճակագրական տվյալներն ու դրանց զարգացման դինամիկան:

Ստորև ներկայացված երկու աղյուսակներում բերված վիճակագրությունը հիմնված է գերազանցապես *«The International Institute for Strategic Studies»*-ի *«The Military balance-2006»*, *«The Military balance-2007»* և *«The Military balance-2008»* տարեկան հաշվետվությունների և *«Центр анализа стратегий и технологий»*-ի *«Moscow defense brief»*-ի տվյալների վրա: Աղբյուրներում առկա ռազմական տվյալների տարբերություններին դժվար է միանշանակ մոտեցում ցուցաբերել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ նպատակահարմար ենք համարել միաժամանակ ներկայացնել երկու աղբյուրները:

Նախևառաջ, կփորձենք անդրադառնալ ռազմական զուգակշռի այն տեղեկատվությանը, որտեղ նկատելի են եղել որոշակի տեղաշարժեր կամ ոլորտի զարգացման դինամիկայի փոփոխություններ: Դա առաջին հերթին վերաբերում է հատկապես Հայաստանի ու Ադրբեջանի ԶՈւ վիճակագրությանը (վերջին տարիներին Հայաստանի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների զարգացման դինամիկայի մասին խոսվում է «*Հայաստանի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների դինամիկան 2003-2008թթ.» ենթաբաժնում*): *The International Institute for Strategic Studies. «The Military Balance-2006-2008»* աղբյուրների համաձայն, մասնավորաբար 2006-2008թթ. Հայաստանի ԶՈւ թվաքանակը նվազման միտում է արձանագրել, ի տարբերություն Ադրբեջանի, որի ԶՈւ թվաքանակը պահպանվել է: Այսպես, եթե 2006թ. Հայաստանի ԶՈւ թվաքանակը կազմում էր 48.160 զինծառայող, ապա 2007թ. այդ ցուցանիշը հաշվվում էր արդեն 43.641, իսկ 2008թ.՝ 42.080[1]: Մյուս՝ *«Центр анализа стратегий и технологий». журнал "Moscow defense brief"* աղբյուրի համաձայն, մասնավորապես 2008թ. Ադրբեջանի ԶՈւ-ում հաշվվել են 73.000 զինծառայող, իսկ Հայաստանի ԶՈւ թվաքանակը ներկայացված է ավելի ցածր, քան նախորդ աղբյուրում՝ շուրջ 40.000 զինծառայող: Ընդ որում, 2008թ. դրությամբ Ադրբեջանի ԶՈւ-ում Ռազմածովային ուժերում ծառայողների թիվը կազմել է շուրջ 2000, իսկ Ռազմաօդային ուժերում՝ 7900 (այս վիճակագրությունը պահպանվել է նաև 2006-2007թթ.): Այն պարագայում, երբ ՀՀ ԶՈւ Ռազմաօդային ուժերում զինծառայողների թիվը կազմել է շուրջ 3200:

Հայաստանի (ԼՂՀ) ու Ադրբեջանի միջև ռազմական զուգակշռի բազմակողմանի ուսումնասիրման համատեքստում կարևոր են նաև Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին ու Ադրբեջանին տրամադրվող «Արտաքին ռազմական աջակցության» տվյալները: Այսպես, *Աղյուսակ 1-ի* տվյալներից երևում է, որ 2006-2008թթ. Հայաստանին հատկացված ԱՄՆ արտաքին ռազմական աջակցության չափաքանակը կայուն նվազման միտում է ունեցել (2006թ. այն կազմել է $3,9 մլն, 2007թ.՝ $3,5, իսկ 2008թ.՝ ընդամենը $3,0 մլն): Ինչ վերաբերում է

[1] Հայաստանի ԶՈւ թվաքանակի փոփոխության հետ կապված, ցավոք, աղբյուրում որևէ մեկնաբանություն չի տրվում: Կարելի է ենթադրել, որ դա կարող է պայմանավորված լինել կամ երկրի ժողովրդագրական խնդիրներով, որն, ի դեպ, ավելի տրամաբանական է, կամ էլ կարելի է դիտել որպես պետական քաղաքականություն:

Ադրբեջանին հատկացված արտաքին ռազմական աջակցությանը, ապա 2006թ. այն եղել է նույնքան, որքան Հայաստանինը ($3,9 մլն), իսկ 2007թ. այդ ցուցանիշը կազմել է $4,5 մլն: 2008թ. Ադրբեջանին հատկացված ԱՄՆ արտաքին ռազմական աջակցության չափը որոշակիորեն զիջել է 2007թ.՝ $4,3 մլն *(Հայաստանին ու Ադրբեջանին, ինչպես և Վրաստանին հատկացված ԱՄՆ ռազմական աջակցության տվյալների համեմատական վերլուծականին կարող եք մանրամասն ծանոթանալ նաև Հավելվածում):*

*Աղյուսակ 1*

*Ռազմական զուգակշիռը Հայաստանի (ԼՂՀ) և Ադրբեջանի միջև 2006-2008թթ.*

| Երկիր | Ռազմական բյուջե, $ մլն | ԱՌԱ* (ԱՄՆ), $ մլն | Զինված Ուժեր | Ռազմական տեխնիկա | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տանկ | Զրահապատ մարտական մեքենա[1] | Հետևակի զրահապատ մեքենա[2] | Հրետանի | Մարտ. ինքնաթիռ | Մարտ. ուղղաթիռ | Ռազմանավ[3] | Երկկենցաղ ռազմանավ *(Amphibious)* |
| Հայաստան | | | | | | | | | | | |
| 2006 | 183 | 3,9 | 48,160 | 110 | 104 | 140 | 229 | 16 | 34 | - | - |
| 2007 | 295 | 3,5 | 43,641 | 110 | 104 | 140 | 229 | 16 | 33 | - | - |
| 2008 | 351 | 3,0 | 42,080 | 110 | 104 | 140 | 229 | 16 | 33 | - | - |
| Ադրբեջան | | | | | | | | | | | |
| 2006 | 658 | 3,9 | 66,740 | 220 | 127 | 468 | 270 | 47 | 35 | 11 | 5 |
| 2007 | 936 | 4,5 | 66,740 | 220 | 127 | 468 | 270 | 47 | 35 | 11 | 5 |
| 2008 | - | 4,3 | 66,740 | 220 | 127 | 468 | 270 | 47 | 35 | 7 | 5 |
| ԼՂՀ | | | | | | | | | | | |
| 2006 | չի նշված | - | 15,000+ | 70+ | 100+ | չի նշված | 100+ | - | - | - | - |
| 2007 | չի նշված | - | ~18,000 | 70+ | 100+ | չի նշված | 100+ | - | - | - | - |
| 2008 | չի նշված | - | ~18,000/ 20,000 | 70+ | 100+ | չի նշված | 100+ | - | - | - | - |

Աղբյուրը՝ *The International Institute For Strategic Studies. «The Military balance_2006/2008»* տարեկան հաշվետվություններ.
* ԱՌԱ – Արտաքին ռազմական աջակցություն *(Foreign Military Assistance_FMA* կամ *Foreign Military Financing_FMF)*

*Աղյուսակ 2*

*Ռազմական զուգակշիռը Հայաստանի (ԼՂՀ) ու Ադրբեջանի միջև 2008թ. տարեսկզբին*

| Քանակը | Ադրբեջան | Հայաստան | ԼՂՀ | Հայաստանում տեղակայված ռուսական ռազմակայանները |
|---|---|---|---|---|
| Զինված ուժեր, հազ. | 73 | 40 | 25 | 4 |
| Տանկ | 220 + 98(հին) | 114 | 316 | 74 |
| Զրահապատ մարտական մեքենա | 382 | 288 | 324 | 224 |
| Զրահապատ մարդատար մեքենա *(armoured tractors)* | 393 | շուրջ 100 | չի նշված | 107 |
| Ինքնագնաց հրետանի | 37 | 38 | 24 | 12 |

---

[1] AIFV-Armoured infantry fighting vehicle /BMP/
[2] APC – Armoured personnel carrier /BTR/
[3] Ռազմանավ (պահակային և առափնյա + ականակիր)

| Քանակը | Ադրբեջան | Հայաստան | ԼՂՀ | Հայաստանում տեղա-կայված ռուսական ռազմակայանները |
|---|---|---|---|---|
| Քարշակ հրետանային համակարգ | 156 | 121 | 254 | 60 |
| Բազմակի օգտագործման հրթիռային համակարգ *(multiple-launch rocket system)* | 56 | 51 | 44 | 8 |
| Նռնականետ համակարգ *(grenade launchers)* | 22 | 19 | շուրջ 100 | 4 |
| Մարտական/տակտիկական հրթիռային համակարգ | - | 8 | - | - |
| Մարտական ինքնաթիռ | 70 | 18 | - | 14 |
| Մարտական ուղղաթիռ | 15 | 14 | - | - |

Աղբյուրը՝ *«Центр анализа стратегий и технологий». «Moscow defense brief»* հանդես

## *Հայաստանի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների զարգացման դինամիկան 2003-2008թթ.*

Ռազմական վիճակագրությունում առանձնահատուկ տեղ է հատկացվում այդ թվում և Ադրբեջանի ու Հայաստանի ռազմական բյուջեների տվյալներին ու դրանց զարգացմանը 2003-2008թթ. կտրվածքով, իսկ դրանց համեմատական վերլուծականն ու հետևությունները ավելի քան կարևոր ու մտահոգիչ են մեր տարածաշրջանի անվտանգության ու կայունության ապահովման համատեքստում: Խոսքը մասնավորաբար վերաբերում է Ադրբեջանի ռազմական բյուջեի ծավալների կտրուկ աճման միտումներին, ինչը կարելի է նկատել նաև ստորև պատկերված գրաֆիկից: 2003-2008թթ. Ադրբեջանի ռազմական բյուջեն կտրուկ աճման միտում է արձանագրել հատկապես 2005թ. սկսած. այսպես, եթե 2005թ. այն հաշվվում էր $321 մլն, ապա 2006թ. այդ ցուցանիշն ավելի քան կրկնապատկվել է՝ կազմելով $662 մլն: Երկրի ռազմական բյուջեի ավելացման դինամիկան պահպանվում է նաև հաջորդ տարիներին, այդ թվում և 2008թ. դրությամբ: Արդյունքում՝ 2005թ. ի վեր կտրուկ աճել է Հայաստանի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների ծավալների միջև տարբերությունը հօգուտ վերջինի: Այսպես, եթե 2003թ. Ադրբեջանի ռազմական բյուջեն գերազանցում էր Հայաստանի ռազմական բյուջեն 1,7 անգամ, իսկ 2005թ.՝ 2,2, ապա 2006թ. այդ տարբերությունը կազմում էր 3,5 անգամ, 2007թ.՝ 3,0: 2008թ. Հայաստանի ռազմական բյուջեն զիջում էր հարևան հանրապետության համապատասխան ցուցանիշին շուրջ 3,2 անգամ:

Միևնույն ժամանակ, սակայն, պետք է նկատել նաև, որ նշված ժամանակաշրջանում և հատկապես վերջին տարիներին Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ռազմական բյուջեի ծախսերի կտրուկ աճման միտումը, թերևս, պայմանավորված է ոչ այնքան վերջինի ընդհանուր բյուջեից ռազմական ոլորտին տրամադրվող ֆինանսների ավելացմամբ, որքան հարևան հանրապետության տարեկան պետբյուջեի ընդհանուր եկամուտների ծավալների մեծացմամբ: Համենայնդեպս, դրա մասին են խոսում երկու երկրների պետբյուջեներից ռազմական ոլորտին հատկացվող միջոցների տոկոսաչափերի տվյալները: Այսպես, 2007թ. Հայաստանի ռազմական բյուջեն կազմել է երկրի պետբյուջեի 5,3%-ը[1], իսկ 2008թ.՝ ընդամենը 5,9%-ը (2008թ. Հայաստանի բյուջեն, ըստ ոչ պաշտոնական տվյալների, հաշվվել է $2,28 մլրդ): Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա 2007թ. երկրի ռազմական ծախսերը, ըստ ԱՄՆ ԿՀՎ տվյալների, կազմել են ընդհանուր բյուջեի ($6,755 մլրդ) 7,1%-ը, իսկ 2008թ. այդ ցուցանիշը հաշվվում էր 7,4% (2008թ. Ադրբեջանի բյուջեն արդեն հաշվվում էր $9,070 մլրդ):

[1] ԱՄՆ ԿՀՎ տվյալներով, 2007թ. Հայաստանի պետբյուջեն կազմել է $1.666 մլրդ:

*Աղյուսակ 3*

*Հայաստանի և Ադրբեջանի ռազմական բյուջեն 2003-2008թթ., $ մլն*

| Երկիր | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 |
|---|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 81 | 100 | 144 | 187 | 312 | 382 |
| Ադրբեջան | 144 | 247 | 321 | 662 | 941 | 1211 |

Աղբյուրը՝ *«Центр анализа стратегий и технологий». «Moscow defense brief»* հանդես

## *2002-2007թթ. Ադրբեջանին հատկացված ռազմական տեխնիկան՝ ըստ մատակարար երկրների*

*Աղյուսակ 4-ում* ներկայացվում է 2000-2007թթ. կտրվածքով Ադրբեջանին հասցեագրված ռազմամթերքի այն մատակարարումների վիճակագրությունը (ըստ մատակարար երկրների), որը հաղորդագրվել կամ հնչեցվել է: Այս տեսանկյունից աղյուսակում բերված տվյալները, ըստ էության, կփոխակերպեն ընդհանուր պատկերը, եթե հաշվի առնենք Թուրքիայի կողմից Ադրբեջանին տրամադրվող ռազմական տեխնիկայի մեծ ծավալների մատակարարումները, որոնք հիմնականում հրապարակման ենթակա չեն:

Աղյուսակի համաձայն, սույն ժամանակահատվածում մատակարար երկրների ցուցակում գերակշռում է մասնավորաբար Ուկրաինան: Վերջինի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական տեխնիկայի շարքում առանձնահատուկ պետք է նշել 2006-2007թթ. կտրվածքով 12 միավոր *MiG-29* մարտական և 2 միավոր *MiG-29UB* մարտական-ուսումնական ինքնաթիռների հատկացման հանգամանքը: Երկու խոսք *MiG-29* ռմբակոծչի ռազմատեխնիկական բնութագրերի վերաբերյալ. մարտական ինքնաթիռը գերձայնային ռեակտիվ ռմբակոծիչ է, որը զինված է 6 միավոր *AA-10 Alamo* կամ *AA-11 Archer* «օդ-օդ» տեսակի հրթիռներով (իսկ ավելի վաղ շրջանում՝ *AA-8* և *AA-9* տեսակի): Ռմբակոծիչը նախատեսված է սեփական ցամաքային զորքերն ու օբյեկտները հակառակորդի օդային հարձակումներից պաշտպանելու, հակառակորդի ռազմական ավիացիայի օդային հետախուզությանը հակազդելու համար՝ ցերեկային ու գիշերային, այդ թվում և եղանակային բարդ պայմաններում: Բացի միջին ու մոտ հեռավորության օդային նպատակակետերից, ինքնաթիռը կարող է խոցել նաև ցամաքային ու ծովային շարժական ու անշարժ նպատակակետերը: Որոշ ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն, ներկայում *MiG-29* ռմբակոծչի շուրջ 600 միավոր շահագործվում են նախկին ԽՍՀՄ հանրապետությունների զինված ուժերի կազմում: Ինքնաթիռն արտահանվել է շուրջ 10 երկրներ: Ինչ վերաբերում է *MiG-29UB* մարտական-ուսումնական ինքնաթիռին, ապա վերջինս զինված է 1 միավոր *ГШ-301* 30-մմ հրանոթով (150 փամփուշտներով), մինչև 6 միավոր օդային մերձամարտի համար նախատեսված Р-73 տեսակի հրթիռներով:

Ուկրաինայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական տեխնիկայից նշենք նաև 45 միավոր *T-72* տեսակի տանկի, 36 միավոր *M-46* 130-մմ քարշակ հրետանու, 12 միավոր *9RK58 Smerch* բազմակի օգտագործման հրթիռային համակարգի, 85 միավոր *PM-38* քարշակ նռնականետ համակարգի մատակարարման մասին:

*Հայաստանի* պաշտպանական անվտանգության տեսանկյունից կարևորվում է նաև Վրաստանի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական տեխնիկայի վերաբերյալ վիճակագրությունը. մասնավորապես 2002-2005թթ. Վրաստանն Ադրբեջանին է տրամադրել 12 միավոր *Su-25* ռմբակոծիչ և 1 միավոր Su-25UB մարտական-ուսումնական ռմբակոծիչ ինքնաթիռ: Ի դեպ, Su-25 զրահապատ ռմբակոծիչը նախատեսվում է մարտադաշտում ցամաքային զորքերին անուղղակի աջակցություն ցուցաբերելու համար, նպատակակետի թե՛ ցերեկային, թե՛ գիշերային տեսանելիության պայմաններում: Նշենք նաև, որ ներկայում *Su-25*-ը ՌԴ ռազմաօդային ուժերի հիմնական ռմբակոծիչ ինքնաթիռն է: Կիրառվել է նաև վրաց-հարավօսական օգոստոսյան ռազմական բախումների ընթացքում: Ինչ վերաբերում է *Su-25UB* մարտական-ուսումնական ռմբակոծիչ ինքնաթիռին (ոչ պաշտոնական անվանումը՝ «Գրաչ»),

ապա այն հագեցած է ժամանակակից պահանջներին համապատասխանող սպառազինությամբ: Մարտական ինքնաթիռը կրում է «օդ-ցամաք» կառավարվող հրթիռներ, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում բոլոր տեսակի տանկերի ու զրահատեխնիկայի ոչնչացումը, իսկ «օդ-օդ» հրթիռներով ոմբահարում է օդային նշանակետերը:

*Աղյուսակ 4*

*2000-2007թթ. Ադրբեջանին հասցեագրված ռազմամթերքի հայտնի մատակարարումները*

| Տեսակը | Քանակը | Մատակարար երկիր | Մատակարարման տարեթիվը |
|---|---|---|---|
| T-72 տանկ | 45<br>60<br>1 | Ուկրաինա<br>Բելառուս<br>Սլովակիա | 2004 – 2006<br>2005 – 2006<br>2002 |
| BMP-1 զրահապատ մարտական մեքենա | 2 | Ուկրաինա | 2005 |
| BTR-3U զրահապատ մարդատար մեքենա | 3 | չի նշված | 2006 |
| M-46 130-մմ քարշակ հրետանի | 36 | Ուկրաինա | 2002 |
| MT-12 100-մմ հակատանկային հրետանի | 72 | Բուլղարիա | 2002 |
| *9RK58 Smerch* բազմակի օգտագործ. հրթիռային համակարգ | 12 | Ուկրաինա | 2004 – 2005 |
| PM-38 քարշակ նռնականետ համակարգ | 85 | Ուկրաինա | 2005 – 2006 |
| MiG-29 մարտական ինքնաթիռ | 12 | Ուկրաինա | 2006 – 2007 |
| MiG-29UB մարտական-ուսումնական ինքնաթիռ | 2 | Ուկրաինա | 2006 |
| Su-25 ռմբակոծիչ | 12 | Վրաստան | 2002 – 2005 |
| Su-25UB մարտական-ուսումնական ռմբակոծիչ ինքնաթիռ | 1 | Վրաստան | 2005 |
| L-39 ուսումնական | 12 | Ուկրաինա | 2006 |
| AB-25 պարեկային ռազմանավակ | 1 | Թուրքիա | 2000 |
| *Point class* տեսակի պարեկային ռազմանավակ | 1 | ԱՄՆ | 2003 |
| Փոքր տեսակի պարեկային ռազմանավակ | 2 | ԱՄՆ | 2001 |
| | 30 | Թուրքիա | 2001 – 2005 |

Աղբյուրը՝ *«Центр анализа стратегий и технологий». журнал "Moscow defense brief"*

***Կարեն Վերանյան***
***«Նորավանք» հիմնադրամ***

*Հավելված 1*

***ԱՄՆ ռազմական/անվտանգության աջակցությունը Հարավային Կովկասում՝ ըստ ոլորտների և ընդհանուր արդյունքների. 2000-2007թթ.[1], $հազ.***

| *Հայաստան* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
| Արտաքին ռազմական աջակցություն/ FMF | -- | -- | 4.000 | 3.000 | 2.485 | 7.936 | 3.960 | 3.500 |
| Ուսուցում և զինում/IMET | -- | -- | 400 | 750 | 869 | 819 | 743 | 790 |
| Չտարածում,ականազերծում/հակա-ահաբեկչ. /NADR-ATA | -- | -- | -- | -- | -- | 332 | 165 | 1.000 |
| Զենքի արտահանման վերահսկում և սահմանային անվտանգ./NADR-EXBS | -- | 1.000 | 870 | 1.850 | 300 | 300 | 700 | 1.040 |
| Ականազերծում/NADR-HD | 300 | 850 | 1.200 | 750 | -- | -- | -- | -- |
| Խաղաղության կորպուս/Peace Corps | 1.397 | 1.343 | 1.331 | 1.333 | 1.604 | 1.678 | 1.882 | 1.814 |
| P.L. 480 Title II[2] | -- | 742 | -- | -- | -- | 1.098 | -- | -- |
| **Ընդհանուր** | **1.697** | **3.935** | **7.801** | **7.683** | **5.258** | **12.163** | **7.450** | **8.144** |
| *Ադրբեջան* | | | | | | | | |
| Ծրագիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
| Արտաքին ռազմական աջակցություն/ FMF | -- | -- | 4.000 | 3.000 | 2.485 | 7.936 | 3.960 | 4.500 |
| Ուսուցում և զինում/IMET | -- | -- | 377 | 750 | 1.084 | 879 | 743 | 885 |
| Չտարածում,ականազերծում/հակա-ահաբեկչ. /NADR-ATA | -- | -- | -- | -- | -- | 808 | 400 | 948 |
